ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 01.12.2017թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ՍՑ-ԱՄ-2017/74

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ նաև՝ Խորհուրդ) ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 13.11.2017թ. թիվ 03/26-3/20695-17 գրությամբ «ՌԱՕ Մարս» ՓԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ քննչական կոմիտեի (այսուհետև՝ Պատվիրատու) 10.11.2017թ. թիվ 08/18/7624-1 գրության հիման վրա, 13.11.2017թ. թիվ 03/26-3/20695-17 գրությամբ Խորհրդում նախաձեռնել է «ՌԱՕ Մարս» ՓԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետև՝ Ցուցակ) ներառելու պաշտոնական ընթացակարգ:

2. «ՌԱՕ Մարս» ՓԲԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը 15.11.2017թ. թիվ ԳԲԽ-ՄԱ/1/20888-17 գրությամբ կարծիք ստանալու նպատակով դիմել է «ՌԱՕ Մարս» ՓԲԸ-ին (այսուհետև՝ Ընկերություն):

Ի պատասխան վերոհիշյալ գրության՝ Ընկերությունը 23.11.2017թ. թիվ 01/128 գրությամբ Խորհրդին հայտնել է հետևյալը.

ՀՀ քննչական կոմիտեի կողմից կազմակերպված «ՀՀՔԿԴ-ԳՀԱՊՁԲ-ԳԿ-17/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին (այսուհետև՝ Ընթացակարգ) մասնակցելու նպատակով 27.10.2017թ. «ՌԱՕ Մարս» ՓԲԸ-ն հայտ է ներկայացրել:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 31.10.2017թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 2 արձանագրության 3.1 կետի համաձայն՝ բոլոր մասնակիցների կողմից ներկայացված հայտերը կազմված են եղել հրավերի պահանջներին համապատասխան, բացառությամբ «ՌԱՕ Մարս» ՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտի: «ՌԱՕ Մարս» ՓԲԸ-ի կողմից ներակայացված հայտի՝

1. Հավելված 10-ում՝ տուժանքի մասին համաձայնագրում /հայտի ապահովում/, ամսաթիվը նշված է 27 նոյեմբեր 2017թ., իսկ էլեկտրոնային ստորագրության ամսաթիվն է 27.10.2017թ.:

2. Հավելված 2.1-ը՝ մասնակցի իրական շահառուների մասին տվյալները, թերի են լրացված, լրացված չէ օրենսդրությամբ նախատեսված անձը հաստատող փաստաթղթերի տեսակը և համարը:

Նույն արձանագրության 5-րդ կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը որոշել է կասեցնել նիստը և հարցում ներկայացնել լիազոր մարմնին, պարզելու թե արդյոք մասնակցին մերժելու հիմք է հանդիսանում «ՌԱՕ Մարս» ՓԲԸ-ի կողմից ներկայացված տուժանքի համաձայնագրում արձանագրված սխալը:

Ի պատասխան վերոնշյալ հարցմանը՝ ՀՀ ֆինանսների նախարարությունը 07.11.2017թ. թիվ 04/27-1/20190-17 գրությամբ պատասխանել է. «Նկատի ունենալով, որ գրության մեջ նշված մասնակիցը բովանդակային առումով կատարել է տուժանքի մասին համաձայնագրի լրացման պահանջները, ինչպես նաև այն, որ հիշյալ համաձայնագրում նշված ամսաթիվը չի

կարող խոչընդոտել անհրաժեշտության դեպքում մասնակցից հայտի ապահովման գանձման գործընթացին, գտնում ենք, որ նման իրավիճակում ձևական սխալների պատճառով հայտի անբավարար գնահատման համար հիմքեր առկա չեն»:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 07.11.2017թ.-ի ժամը 11:30-ի նիստի թիվ 3 արձանագրության 1-ին կետով՝ հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարության պարզաբանումը, հանձնաժողովը որոշել է, որ «ՌԱՕ Մարս» ՓԲԸ-ի տուժանքի մասին համաձայնագրում նշված ամսաթիվը չի կարող խոչընդոտել անհրաժեշտության դեպքում մասնակցից հայտի ապահովման գանձման գործընթացին, և որ նման սխալների պատճառով հայտի անբավարար գնահատման համար հիմքեր առկա չեն:

Նույն արձանագրության թիվ 1 կետով գնահատող հանձնաժողովը որոշել է ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետի համաձայն՝ նիստը կասեցնել մեկ աշխատանքային օրով՝ «ՌԱՕ Մարս» ՓԲԸ-ին տրամադրելով մեկ աշխատանքային օր ժամանակ՝ հավելված 2.1-ում լրացնելու օրենսդրությամբ նախատեսված անձը հաստատող փաստաթղթի տեսակը և համարը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 08.11.2017թ. ժամը 14:30-ի նիստի թիվ 4 արձանագրության 1-ին կետով արձանագրել է, որ «ՌԱՕ Մարս» ՓԲԸ-ն սահմանված ժամկետում չի ներկայացրել հավելված 2.1-ը և հանձնաժողովը որոշել է՝ մերժել «ՌԱՕ Մարս» ՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտը՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետը: Կարգի 45-րդ կետի համաձայն որոշել է «ՌԱՕ Մարս» ՓԲԸ-ի տվյալները ուղարկել լիազոր մարմնին:

ՀՀ քննչական կոմիտեի կողմից կազմակերպված «ՀՀՔԿԴ-ԳՀԱՊՁԲ-ԳԿ-17/4» ծածկագրով հայտարարված մրցույթի հրավերին կից հավելված 2-ի երկրորդ կետով մասնակցից պահանջվում է ներկայացնել հայտը ներկայացնելու օրվա դրությամբ այն ֆիզիկական անձի (անձանց) տվյալները, ով ուղղակի կամ անուղղակի ունի մասնակցի կանոնադրական կապիտալում քվեարկող բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) ավել քան տաս տոկոսը, ներառյալ ըստ ներկայացնողի բաժնետոմսերը, կամ այն անձի (անձանց) տվյալները, ով իրավունք ունի նշանակելու կամ ազատելու մասնակցի գործադիր մարմնի անդամներին, կամ ստանում է մասնակցի կողմից իրականացվող ձեռնարկատիրական կամ

այլ գործունեության արդյունքում ստացված շահույթի տասնհինգ տոկոսից ավելին (իրական շահառուներ):

Հրավերի հավելված 2.1-ով պահանջվում է ներկայացնել տվյալներ մասնակցի իրական շահառուի վերաբերյալ: Հավելվածի առաջին աղյուսակում անհրաժեշտ է նշել իրական շահառուի անուն, ազգանունը, երկրորդ աղյուսակում՝ ՀՀ քաղաքացիների համար՝ նույնակա-նացման քարտի կամ անձնագրի կամ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված անձը հաստատող փաստաթղթի տեսակը և համարը, իսկ երրորդ սյունակում՝ օտարերկրյա քաղաքացիների համար համապատասխան երկրի օրենսդրությամբ նախատեսված անձը հաստատող փաստաթղթի տեսակը և համարը:

«ՌԱՕ Մարս» ՓԲԸ-ի կողմից Հավելված 2.1-ով՝ տվյալներ մասնակցի իրական շահառուի վերաբերյալ որպես մասնակցի իրական շահառու նշվել է ՌԴ ի դեմս՝ Պետական ունեցվածքի կառավարման դաշնային գործակալություն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշել է նիստը կասեցնել մեկ աշխատանքային օրով՝ «ՌԱՕ Մարս» ՓԲԸ-ին տրամադրելով մեկ աշխատանքային օր ժամանակ՝ հավելված 2.1-ում լրացնելու օրենսդրությամբ նախատեսված անձը հաստատող փաստաթղթի տեսակը և համարը:

«ՌԱՕ Մարս» ՓԲԸ-ի կողմից պատվիրատուին ներկայացվել է ՀՀ կենտրոնական դեպոզիտարիայի կողմից տրամադրված արժեթղթերի սեփականատերերի /անվանատերերի/ ցուցակը, ըստ որի «ՌԱՕ Մարս» ՓԲԸ-ի 100% բաժնետեր է հանդիսանում է ՌԴ-ի ի դեմս՝ Պետական ունեցվածքի կառավարման դաշնային գործակալությունը և նշվել վերջինիս փոստային հասցեն:

Բնականաբար, նման պայմաններում, երբ մասնակցի իրական շահառուն հանդիսանում է իրավաբանական անձը՝ ի դեմս ՌԴ-ի Պետական ունեցվածքի կառավարման դաշնային գործակալության, «ՌԱՕ Մարս» ՓԲԸ-ն ի սկզբանե չէր կարող ներկայացնել նշված իրավաբանական անձի՝ մասնակցի իրական շահառուի, օտարերկրյա քաղաքացիների համար համապատասխան երկրի օրենսդրությամբ նախատեսված անձը հաստատող փաստաթղթի տեսակը և համարը:

Ընկերությունը հայտնել է, որ նման պայմաններում իրավաչափ չէր ՀՀ քննչական կոմիտեի կողմից «ՌԱՕ Մարս» ՓԲԸ-ից գնահատող հանձնաժողովի 07.11.2017թ.-ի ժամը

11:30-ին տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության 1-ին կետով՝ հավելված 2.1-ում օրենսդրությամբ նախատեսված անձը հաստատող փաստաթղթի տեսակը և համարը լրացնելու պահանջը, քանզի հավելված 2.1-ում նշված իրական շահառուն՝ ՌԴ պետական ունեցվածքի կառավարման դաշնային գործակալությունը, չէր կարող ունենալ օտարերկրյա քաղաքացու համար համապատասխան երկրի օրենսդրությամբ նախատեսված անձը հաստատող փաստաթուղթ:

Ուստի իրավաչափ չէ նաև 08.11.2017թ.-ին ժամը 14:30-ին գնահատող հանձնաժողովի տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրության 1-ին կետով կայացրած որոշումը՝ «ՌԱՕ Մարս» ՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտը մերժելու վերաբերյալ այն հիմնավորմամբ. որ «ՌԱՕ Մարս» ՓԲԸ-ն սահմանված ժամկետում Հավելված 2.1-ում պահանջված շտկումը չի կատարել:

«Գնումների մասին» 2016թ. << օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» պարբերության համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Ամփոփելով վերոգրյալը՝ Ընկերությունը հայտնել է, որ «ՌԱՕ Մարս» ՓԲԸ-ն թույլ չի տվել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակում ստանձնած որևէ պարտավորության խախտում, և խնդրել է Խորհրդին «ՌԱՕ Մարս» ՓԲԸ-ին չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Միևնույն ժամանակ Ընկերությունը հայտնել է Խորհրդին, որ «ՌԱՕ Մարս» ՓԲԸ-ի կողմից ներկայացրած վճարման պահանջագրում նշված հայտի ապահովման գումարը գերազանցում է հայտով առաջարկվող գնի հինգ տոկոսը, ինչը հիմք էր ի սկզբանե «ՌԱՕ Մարս» ՓԲԸ-ի կողմից ներկայացրած հայտը մերժելու համար:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 21.11.2017թ. ժամը 11:30-ի նիստի վերաբերյալ, Ընկերության լիազորված ներկայացուցիչները ապահովել են իրենց մասնակցությունը, ովքեր միջնորդել են Խորհրդին երեք աշխատանքային օրով հետաձգել

նիստը, քանի որ իրենք «ՌԱՕ Մարս» ՓԲԸ-ի կողմից որպես ներկայացուցիչ ներգրավվել են 20.11.2017թ.-ին և կարիք ունեն ծանոթանալու գործի նյութերին և ներկայացնելու մասնագիտական դիրքորոշում:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 24.11.2017թ. ժամը 11:40-ի նիստի վերաբերյալ, Ընկերության լիազորված ներկայացուցիչները ապահովել են իրենց մասնակցությունը, ովքեր պնդել են 23.11.2017թ. թիվ 01/28 գրությամբ Խորհրդին ներկայացրած դիրքորոշումը:

3. **ՀՀ քննչական կոմիտեի կողմից ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը**

ՀՀ քննչական կոմիտեն (այսուհետև՝ Պատվիրատու) 10.11.2017թ. թիվ 08/18/7624-1 գրությամբ ներկայացրել է «ՌԱՕ Մարս» ՓԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 21.11.2017թ. ժամը 11:30-ի և 24.11.2017թ. ժամը 11:40-ի նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. **ՍՑ-ԱՄ-2017/74 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը**

ՍՑ-ԱՄ-2017/74 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ քննչական կոմիտեի կողմից գրասենյակային կահույքի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀՔԿԴ-ԳՀԱՊՁԲ-ԳԿ-17/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «ՌԱՕ Մարս» ՓԲԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 31.10.2017թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 2 արձանագրության 3.1 կետով արձանագրել է, որ բոլոր մասնակիցների կողմից ներկայացված

հայտերը /հայտում առկա փաստաթղթերը/ կազմված են հրավերի պահանջներին համապատասխան, բացառությամբ «ՌԱՕ Մարս» ՓԲԸ-ի հայտի: «ՌԱՕ Մարս» ՓԲԸ-ի կողմից ներակայացված հայտի՝

• Հավելված 10-ում՝ տուժանքի մասին համաձայնագրում /հայտի ապահովում/, ամսաթիվը նշված է 27 նոյեմբերի 2017թ., իսկ էլեկտրոնային ստորագրության ամսաթիվն է 27.10.2017թ.:

• Հավելված 2.1-ը՝ մասնակցի իրական շահառուների մասին տվյալները, թերի են լրացված, լրացված չէ օրենսդրությամբ նախատեսված անձը հաստատող փաստաթղթերի տեսակը և համարը:

3. Նույն արձանագրության 5-րդ կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը որոշել է կասեցնել նիստը և հարցում ներկայացնել լիազոր մարմնին, պարզելու թե արդյոք մասնակցին մերժելու հիմք է հանդիսանում «ՌԱՕ Մարս» ՓԲԸ-ի կողմից ներկայացված տուժանքի համաձայնագրում արձանագրված սխալը:

4. Ի պատասխան վերոնշյալ հարցմանը՝ ՀՀ ֆինանսների նախարարությունը 07.11.2017թ. թիվ 04/27-1/20190-17 գրությամբ հայտնել է, որ նկատի ունենալով, որ գրության մեջ նշված մասնակիցը բովանդակային առումով կատարել է տուժանքի մասին համաձայնագրի լրացման պահանջները, ինչպես նաև այն, որ հիշյալ համաձայնագրում նշված ամսաթիվը չի կարող խոչընդոտել անհրաժեշտության դեպքում մասնակցից հայտի ապահովման գանձման գործընթացին, գտնում ենք, որ նման իրավիճակում ձևական սխալների պատճառով հայտի անբավարար գնահատման համար հիմքեր առկա չեն:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը՝ 07.11.2017թ.-ի ժամը 11:30-ի նիստի թիվ 3 արձանագրության 1-ին կետով արձանագրել է, որ հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարության պարզաբանումը, հանձնաժողովը որոշել է, որ «ՌԱՕ Մարս» ՓԲԸ-ի տուժանքի մասին համաձայնագրում նշված ամսաթիվը չի կարող խոչընդոտել անհրաժեշտության դեպքում մասնակցից հայտի ապահովման գանձման գործընթացին, և որ նման սխալների պատճառով հայտի անբավարար գնահատման համար հիմքեր առկա չեն:

6. Նույն արձանագրության թիվ 1 կետով գնահատող հանձնաժողովը որոշել է ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետի համաձայն՝ նիստը կասեցնել մեկ աշխատանքային

օրով՝ «ՌԱՕ Մարս» ՓԲԸ-ին տրամադրելով մեկ աշխատանքային օր ժամանակ՝ հավելված 2.1-ում լրացնելու օրենսդրությամբ նախատեսված անձը հաստատող փաստաթղթի տեսակը և համարը:

7. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 08.11.2017թ. ժամը 14:30-ի նիստի թիվ 4 արձանագրության 1-ին կետով արձանագրել է, որ «ՌԱՕ Մարս» ՓԲԸ-ն սահմանված ժամկետում չի ներկայացրել շտկված հավելված 2.1-ը և հանձնաժողովը որոշել է՝ մերժել «ՌԱՕ Մարս» ՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտը՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետը: Կարգի 45-րդ կետի համաձայն որոշել է «ՌԱՕ Մարս» ՓԲԸ-ի տվյալները ուղարկել լիազոր մարմին:

5. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

Խորհուրդն, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 13.11.2017թ. թիվ 03/26-3/20695-17 գրությունը, ՀՀ քննչական կոմիտեի 10.11.2017թ. թիվ 08/18/7624-1 գրությունը՝ կից փաստաթղթերով, «ՌԱՕ Մարս» ՓԲԸ-ի 23.11.2017թ. թիվ 01/128 գրությունը, հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետև՝ Օրենքի) 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: ***Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:***

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի «թ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է այն ֆիզիկական անձի (անձանց) տվյալները, ով ուղղակի կամ անուղղակի ունի մասնակցի կանոնադրական կապիտալում քվեարկող բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) ավելի, քան տասը տոկոսը՝ ներառյալ ըստ ներկայացնողի բաժնետոմսերը կամ այն անձի (անձանց) տվյալները, ով իրավունք ունի նշանակելու կամ ազատելու մասնակցի

գործադիր մարմնի անդամներին կամ ստանում է մասնակցի կողմից իրականացվող ձեռնարկատիրական կամ այլ գործունեության արդյունքում ստացված շահույթի տասնհինգ տոկոսից ավելին: Սույն պարբերության մեջ նշված անձանց բացակայության դեպքում ներկայացվում են գործադիր մարմնի ղեկավարի և անդամների տվյալները: Ընդ որում, եթե մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից, ապա սույն պարբերությամբ նախատեսված տեղեկատվությունը պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության հետ միաժամանակ հրապարակվում է տեղեկագրում:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Մասնակիցը հայտով՝ հրավերով սահմանված պահանջով ներկայացնում է հայտի ապահովում, ***որի չափը հավասար է հայտով առաջարկվող գնի մինչև հինգ տոկոսին:***

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ ***մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝***

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի

միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը որոշում է կայացնում մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին:

ՀՀ քննչական կոմիտեի կողմից գրասենյակային կահույքի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀՔԿԴ-ԳՀԱՊՁԲ-ԳԿ-17/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «ՌԱՕ Մարս» ՓԲԸ-ն:

Ընթացակարգի հրավերին կից հավելված 2-ի 2-րդ կետով մասնակցից պահանջվել է ներկայացնել հայտը ներկայացնելու օրվա դրությամբ այն ֆիզիկական անձի (անձանց) տվյալները, ով ուղղակի կամ անուղղակի ունի մասնակցի կանոնադրական կապիտալում քվեարկող բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) ավել քան տաս տոկոսը, ներառյալ ըստ ներկայացնողի բաժնետոմսերը, կամ այն անձի (անձանց) տվյալները, ով իրավունք ունի նշանակելու կամ ազատելու մասնակցի գործադիր մարմնի անդամներին, կամ ստանում է մասնակցի կողմից իրականացվող ձեռնարկատիրական կամ այլ գործունեության արդյունքում ստացված շահույթի տասնհինգ տոկոսից ավելին (իրական շահառուներ):

Ընթացակարգի հրավերի հավելված 2.1-ով պահանջվել է ներկայացնել տվյալներ մասնակցի իրական շահառուի վերաբերյալ: Հավելվածի առաջին աղյուսակում անհրաժեշտ է նշել իրական շահառուի անուն, ազգանունը, հայրանունը, երկրորդ աղյուսակում՝ ՀՀ քաղաքացիների համար՝ նույնականացման քարտի կամ անձնագրի կամ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված անձը հաստատող փաստաթղթի տեսակը և համարը, իսկ երրորդ սյունակում՝ օտարերկրյա քաղաքացիների համար համապատասխան երկրի օրենսդրությամբ նախատեսված անձը հաստատող փաստաթղթի տեսակը և համարը:

«ՌԱՕ Մարս» ՓԲԸ-ի կողմից Հավելված 2.1-ով՝ տվյալներ մասնակցի իրական շահառուի վերաբերյալ որպես մասնակցի իրական շահառու նշվել է ***ՌԴ ի դեմս՝ Պետական ունեցվածքի կառավարման դաշնային գործակալություն:***

«ՌԱՕ Մարս» ՓԲԸ-ն Հավելված 2.1-ին կից Պատվիրատուին է ներկայացրել ՀՀ կենտրոնական դեպոզիտարիայի կողմից տրամադրված արժեթղթերի սեփականատերերի /անվանատերերի/ ցուցակը, համաձայն որի ***«ՌԱՕ Մարս» ՓԲԸ-ի 100% բաժնետեր է հանդիսանում է ՌԴ-ն ի դեմս՝ Պետական ունեցվածքի կառավարման դաշնային գործակալության*** և նշվել վերջինիս փոստային հասցեն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 07.11.2017թ.-ի ժամը 11:30-ի նիստի թիվ 3 արձանագրության թիվ 1 կետով որոշել է Կարգի 41-րդ կետի համաձայն՝ նիստը կասեցնել մեկ աշխատանքային օրով՝ «ՌԱՕ Մարս» ՓԲԸ-ին տրամադրելով մեկ աշխատանքային օր ժամանակ՝ հավելված 2.1-ում լրացնելու օրենսդրությամբ նախատեսված անձը հաստատող փաստաթղթի տեսակը և համարը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 08.11.2017թ. ժամը 14:30-ի նիստի թիվ 4 արձանագրության 1-ին կետով արձանագրել է, որ «ՌԱՕ Մարս» ՓԲԸ-ն սահմանված ժամկետում չի ներկայացրել շտկված հավելված 2.1-ը և հանձնաժողովը որոշել է՝ մերժել «ՌԱՕ Մարս» ՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտը՝ հիմք ընդունելով Կարգի 42-րդ կետը:

Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «թ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է այն ֆիզիկական անձի (անձանց) տվյալները, ով ուղղակի կամ անուղղակի ունի մասնակցի կանոնադրական կապիտալում քվեարկող բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) ավելի, քան տասը տոկոսը՝ ներառյալ ըստ ներկայացնողի բաժնետոմսերը կամ այն անձի (անձանց) տվյալները, ով իրավունք ունի նշանակելու կամ ազատելու մասնակցի գործադիր մարմնի անդամներին կամ ստանում է մասնակցի կողմից իրականացվող ձեռնարկատիրական կամ այլ գործունեության արդյունքում ստացված շահույթի տասնհինգ տոկոսից ավելին: Սույն պարբերության մեջ նշված անձանց բացակայության դեպքում ներկայացվում են գործադիր մարմնի ղեկավարի և անդամների տվյալները: Ընդ որում, եթե մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից, ապա սույն պարբերությամբ նախատեսված տեղեկատվությունը պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության հետ միաժամանակ հրապարակվում է տեղեկագրում:

Այսպիսով Խորհուրդն արձանագրում է, որ նման փաստական հանգամանքներում, երբ մասնակցի իրական շահառուն հանդիսանում է իրավաբանական անձը՝ ի դեմս ՌԴ-ի

Պետական ունեցվածքի կառավարման դաշնային գործակալության, «ՌԱՕ Մարս» ՓԲԸ-ն ի սկզբանե չէր կարող ներկայացնել նշված իրավաբանական անձի՝ մասնակցի իրական շահառուի, օտարերկրյա քաղաքացիների համար համապատասխան երկրի օրենսդրությամբ նախատեսված անձը հաստատող փաստաթղթի տեսակը և համարը:

Ուստի վերոգրյալով պայմանավորված, Խորհուրդը գտնում է, որ Պատվիրատուի կողմից խախտվել է Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «թ» պարբերությամբ սահմանված պահանջը, քանի որ նման պայմաններում Պատվիրատուն մերժելով «ՌԱՕ Մարս» ՓԲԸ-ի հայտը, այն հիմնավորմամբ, որ վերջինս չի շտկել հավելված 2.1-ում օրենսդրությամբ նախատեսված անձը հաստատող փաստաթղթի տեսակը և համարը լրացնելու Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի պահանջը, գործել է ոչ իրավաչափ, քանի որ «ՌԱՕ Մարս» ՓԲԸ-ի կողմից հավելված 2.1-ում նշված իրական շահառուն հանդիսանում է ՌԴ-ն ի դեմս պետական ունեցվածքի կառավարման դաշնային գործակալության, որը չէր կարող ունենալ օտարերկրյա քաղաքացու համար համապատասխան երկրի օրենսդրությամբ նախատեսված անձը հաստատող փաստաթուղթ:

Ինչ վերաբերում է Ընկերության կողմից նշված այն դիտարկմանը, որ «ՌԱՕ Մարս» ՓԲԸ-ի հայտը ի սկզբանե ենթակա էր մերժման, քանի որ Ընկերության կողմից ներկայացված հայտի ապահովման գումարը գերազանցում է հայտով առաջարկվող գնի հինգ տոկոսը, ապա այս մասով Խորհուրդն արձանագրում է, որ «ՌԱՕ Մարս» ՓԲԸ-ն հայտի թիվ 5 հավելվածով ներկայացրել է գնային առաջարկ, որի ընդհանուր գինը կազմել է 156 000 ՀՀ դրամ, միևնույն ժամանակ Ընկերությունը հայտի թիվ 10 հավելվածին՝ տուժանքի մասին համաձայնագրին կից ներկայացրել է մասնակցության հայտի ապահովման վճարման պահանջագիրը, որտեղ հայտի ապահովման գումարի չափը նշել է 156 000 ՀՀ դրամ:

Մինչդեռ Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Մասնակիցը հայտով՝ հրավերով սահմանված պահանջով ներկայացնում է հայտի ապահովում, ***որի չափը հավասար է հայտով առաջարկվող գնի մինչև հինգ տոկոսին***:

Այսպիսով Խորհուրդն արձանագրում է, որ Ընկերության կողմից ներկայացված հայտի ապահովման չափը, այսինքն՝ 156 000 ՀՀ դրամը, գերազանցում է Ընկերության կողմից ներկայացված գնային առաջարկի հինգ տոկոսը, ուստի Խորհուրդը գտնում է, որ

Պատվիրատուն ի սկզբանե Կարգի 41-րդ կետի համաձայն հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում պետք է մերժեր Ընկերության հայտը:

Վերը նշված փաստերով պայմանավորված, Խորհուրդը գտնում է, որ «ՌԱՕ Մարս» ՓԲԸ-ն թույլ չի տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում, հետևաբար Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության 13.11.2017թ. թիվ 03/26-3/20695-17 գրությամբ «ՌԱՕ Մարս» ՓԲԸ-ին (ՀՎՀՀ՝ 01801249) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝ ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ